

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2014թ. հուլիսի 2-3-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական նամագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Շաբոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Արդյունքահեն կառավարման ինտեգրումը ՄԱԿ-ի ծրագրերում» աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2014թ. հուլիսի 15-ին ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մարդու իրավունքներից բխող մոտեցման ինտեգրումը ՄԱԿ-ի ծրագրերում» աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2014թ. հուլիսի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ.Խաչատրյանը և ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացման հարցերով ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների և Եվրասիական Տնտեսության Հանձնաժողովի ներկայացուցիչների աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2014թ. հուլիսի 31-ից – օգոստոսի 1-ը ՀՀ ԱՎԾ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը և ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Պաշտպանության ընդգրկումն արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգում» երկօրյա աշխատաժողովին,
- ✓ 2014թ. հուլիսի 24-25-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած ԱՌՆ առաջարկվող թիրախների և չափորոշիչների կենսունակության և կիրառելիության հնարավորության վերլուծական հետազոտություն իրականացնելու նպատակով նեղ մասնագիտական աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2014թ. օգոստոսի 28-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Յ. Պողոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումներ» խորագրով աշխատաժողով: